«05» դեկտեմբերի 2025թ.

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ճաննախագիծ» ինստիտուտ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 2060-Ն որոշման 12-րդ հավելվածի 9-րդ կետի պահանջները և հաշվի առնելով, որ 26.09.2024թ. կնքված թիվ ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2024/27Հ պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված Հ-3, Երևան (Զրաշխարհ, Մ-4-ի հետ հատման տեղ)-Գառնի – Գեղարդի վանք հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ10+770-կմ27+500 հատվածի (բացառությամբ սողանքային տեղամասերի) հիմնանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ, կապված այլ ենթակառուցվածքների (էլեկտրական սյուներ, կոյուղագծեր, ջրագծեր) վերատեղադրման, նորոգման կամ տեղափոխման հետ և այդ խնդիրներով պայմանավորված ճանապարհի որոշ հատվածներում նախատեսված աշխատանքները ձգձգվել են և սահմանված ժամկետներում չեն իրականացվել, ինչը նպաստել է աշխատանքների կատարման ժամկետի, այդ աշխատանքների մասով, երկարաձգման, իսկ ներկայիս եղանակային պայմանները արդեն իսկ հնարավորություն չեն տալիս շարունակել ասֆալտապատման աշխատանքները՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 28-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի 462-րդ կետի պահանջները, համաձայն որի օրգանական կապակցանյութերով ամրացված գրունտներից հիմքերն ու ծածկերը թույլատրվում է տեղադրել չոր եղանակին, օդի 10^0 C-ից բարձր ջերմաստիճանի պայմաններում, ինչպես նաև այն, որ տվյալ շինարարական աշխատանքները իրականացնող կապալառուի հետ 05.12.2025թ.-ին կնքվել է 715,681,800 ՀՀ դրամ գումարի չափով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նվազեցնելու մասին համաձայնություն, ուստի նկատի ունենալով, որ վերոհիշյալ շինարարական աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունները մատուցվում են «Ճաննախագիծ» ինստիտուտ» ՍՊԸ-ի կողմից, Կողմերը կնքեցին սույն համաձայնությունը հետևյալի մասին.

1. Պայմանագրով Հ-3, Երևան (Զրաշխարհ, Մ-4-ի հետ հատման տեղ)-Գառնի –Գեղարդի վանք հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ10+770-կմ27+500 հատվածի (բացառությամբ սողանքային տեղամասերի)

հիմնանորոգման նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար սահմանված ընդհանուր գնից՝ 5,568,000 ՀՀ դրամի չափով գումարի նվազեցման նպատակով Պատվիրատուն ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացնի համապատասխան իրավական ակտի նախագիծ:

2. 05.12.2025թ.-ից Կատարողը կասեցնում է ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2024/27Հ պայմանագրով նախատեսված հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման գործընթացը՝ մինչև սույն համաձայնության 1-ին կետում նշված իրավական ակտի հաստատումը կամ դրա մերժումը:

3. Սույն համաձայնության 2-րդ կետով նախատեսված իրավական ակտն ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո Կողմերը կձեռնարկեն համապատասխան միջոցներ Պայմանագրում այդ իրավական ակտին համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

4. Սույն համաձայնությունը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 26.09.2024թ. կնքված թիվ ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2024/27Հ պայմանագրի անբաժանելի մասը:

5. Սույն համաձայնությունը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Պատվիրատու՝	Կապալառու՝
ՀՀ ՏԿԵՆ գլխավոր քարտուղար՝	«Ճաննախագիծ» ինստիտուտ» ՍՊԸ -ի տնօրեն
Ա.ԵՐԻՑՅԱՆ	Դ.ՔԱՐՏԱԵՅԱՆ